



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ № 46Լ

ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի
ԹԻՎ 16Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 72-րդ հոդվածի 3-րդ մասի 9-րդ կետը, ՀՀ Նախագահի 30.11.2017թ. թիվ ՆՀ-907-Ա հրամանագիրը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետության դատարանների նախագահների խորհրդի 2011 թվականի օգոստոսի 26-ի «ՀՀ առաջին ատյանի դատարանների նստավայրերը և դատավորների մասնագիտացումների ցանկը հաստատելու մասին» թիվ 16Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

ա) Հավելվածի 9-րդ աղյուսակի 8-րդ կետի «Նստավայրի անվանում» սյունակի «Աբովյան» բառը փոխարինել «Չարենցավան» բառով, իսկ «Դատավոր» սյունակը լրացնել «Շահբազյան Գոռ Լյովայի» բառերով,

բ) Հավելվածի 13-րդ աղյուսակի 10-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ հետևյալ բովանդակությամբ.

10.	քաղաք Գյումրի	Գյումրու վարչական տարածք	Միսակյան Վահե Ներսեսի	Քրեական
-----	---------------	--------------------------	-----------------------	---------

գ) Հավելվածի 14-րդ աղյուսակի 7-րդ կետի «Դատավոր» սյունակը լրացնել «Վարդանյան Ալֆրեդ Մաքսիմի» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի դեկտեմբերի 08-ից:

Հայաստանի Հանրապետության
դատարանների նախագահների
խորհրդի նախագահ

Ա.ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

2017թ. դեկտեմբերի 07
ք. Երևան